ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 5

ՀՀ Լոռու մարզպետի մոտ կայացած ընդլայնված խորհրդակցության

06.05.2024թ. **ք.Վանաձոր**

Մասնակցում էին

Գ.Ասրյանը- մարզպետի տեղակալ
Կ.Աշրաֆյանը- մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղար
Մ.Դալլաքյանը,Ռ.Պողոսյանը,Ռ.Մարգարյանը,Գ.Քարհանյանը,Մ.Խեչումյանը,
Է.Հախվերդյանը,Ա.Շահվերդյանը,Կ.Ադամյանը,Ա. Բեջանյանը
Ա.Սահակյանը -մարզպետի օգնական
Տ.Խաչատրյանը -մարզպետի օգնական

Օ ր ա կ ա ր գ ո ւ մ՝

1. Մարզպետի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարների կողմից նախորդ խորհրդակցությունից հետո կատարված և առաջիկայում կատարվելիք աշխատանքների վերաբերյալ:
(զեկ. մարզպետի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներ)
2. Այլ հարցեր

Ե լ ույ թ ու ն ե ց ա ն՝

1. ՀՀ Լոռու մարզպետի տեղակալ Գ.Ասրյանն ու մարզպետարանի աշխատակազմի զորահավաքային նախապատրաստության բաժնի պետ Ա.Հակոբյանը ներկայացրեցին Հայրենական մեծ պատերազմի մասնակիցների և ՀՀ Պաշտպանության ժամանակ զոհված զինծառայողների ընտանիքների անդամներին տրամադրվող աջակցությունների և արտոնությունների վերաբերյալ տեղեկատվություն:
2. ՀՀ Քաղաքաշինության վարչության պետ Ռ.Մարգարյանը ներկայացրեց քաղաքաշինության և ճանապարհաշինության ոլորտներում իրականացվող պետական մասնակցությամբ և սուբվենցիոն ծրագրերի ընթացքի, ինչպես նաև ապօրինաշինությունների վերահսկման ուղղությամբ իրականացվող աշխատանքների վերաբերյալ տեղեկատվություն:
3. ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Գ. Քարհանյանը ներկայացրեց կրթության, մշակույթի և սպորտի բնագավառների, այդ թվում նաև վերջին զանգի տոնակատարության միջոցառումների վերահսկման ուղղությամբ իրականացվող աշխատանքների վերաբերյալ տեղեկատվություն:
4. ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության գլխավոր մասնագետ Ա.Շահվերդյանը ներկայացրեց տեղեկատվություն գյուղատնտեսության ոլորտի աշխատանքների ընթացքի վերաբերյալ:

Հ ա ն ձ ն ա ր ա ր վ ե ց

1. ՀՀ Լոռու մարզպետի տեղակալ Գ.Ասրյանին՝
Անհրաժեշտ իրազեկման միջոցառումներ իրականացնել ՀՀ պաշտպանության ժամանակ զոհված զինծառայողների ընտանիքի անդամներին տրամադրվող արտոնությունների վերաբերյալ:
2. ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներին՝

Հետևողական մոտեցում ցուցաբերել տրված հանձնարարականները սահմանված ժամկետներում կատարելու և բարձրացված հարցերի լուծման նկատմամբ:

3. ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Գ. Քարհանյանին՝

Վերջին զանգի տոնակատարությունների առիթով հանձնարարել դպրոցի տնօրեններին և հետևողականություն դրսևորել՝ ապօրինի դրամահավաքը բացառելու ուղղությամբ:

10/05/2024

X

ԱՐԱՄ ՂԱԶԱՐՅԱՆ

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ՝ **Ա.ՂԱԶԱՐՅԱՆ**

Արձ. Ս.Մակարյան
Հեռ. 0322 /4-32-99